

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>(011401.00.6) Մասնագիտական մանկավարժություն</i>
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>(011401.00.6) Ինֆորմատիկա</i>
ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ	<i>Մանկավարժության բակալավր</i>
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ	<i>Առկա և հեռակա</i>
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	<i>Առկա՝ 4 տարի Հեռակա՝ 5 տարի</i>
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿԻԶԲ	<i>Մեպտեմբերի առաջին շաբաթը (առկա) Հոկտեմբեր, նոյեմբեր(հեռակա)</i>
ԾԱՆՐԱԲԵՌՆԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	<i>240 կրեդիտ /ECTS/</i>
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԼԵԶՈՒՆ	<i>Հայերեն</i>
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	<i>Ավարտական աշխատանքի պաշտպանություն</i>
ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ /գիտելիք, կարողություն, հմտություն /	<p>ԳԻՏԵԼԻՔ <i>ուսանողն ունակ կլինի՝</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>Ներկայացնել ծրագրավորման հիմնական սկզբունքները, գաղափարները և մեթոդները, համացանցային կրթական ռեսուրսները, կիրառական ծրագրային ապահովումները, տվյալների հենքերի կառուցվածքը և իրականացումը մասնագիտական գործունեության մեջ,</i> • <i>բնութագրել վեբ միջավայրում հավելվածների մշակման հիմնական մեխանիզմներն ու միջոցները, գրաֆիկայի կառուցման հիմնական գործիքակազմը, կլիենտ-սերվեր տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ընթացքում,</i> • <i>բացատրել ինֆորմատիկայի ուսուցման առանձնահատկությունները, տեխնոլոգիաներն ու առաջադեմ միջոցները հանրակրթական դպրոցում, տեղեկատվության անվտանգության ապահովման արդյունավետ միջոցները, կիրառական խնդիրների լուծման ձևերն ու մեթոդները տարբեր ծրագրերում,</i> • <i>ձևակերպել տեղեկատվական կրթության հիմնական չափորոշիչները, պահանջները, խնդիրների լուծման արդյունավետ ու</i>

- օպտիմալ ալգորիթմները, կրթության ներառականության հիմնական սկզբունքները, բնութագրել մանկավարժի հիմնական գործառույթները, դասավանդման արդի տեխնոլոգիաներն ու մեթոդները, դրանց կիրառման ձևերը,
- ներկայացնել գործավար /օպերացիոն/ համակարգերի հիմնական գործառույթները, աշխատանքի սկզբունքները, համակարգիչների ճարտարապետությունը, բջջային ծրագրավորման հիմնական մեխանիզմները,
- ստուգել համակարգչային և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներկայացնելու գործավար /օպերացիոն/ համակարգերի հիմնական գործառույթները, աշխատանքի սկզբունքները, համակարգիչների ճարտարապետությունը, բջջային ծրագրավորման հիմնական մեխանիզմները, դերը կրթության գործընթացում, ուսումնական վեբ տեխնոլոգիաների մշակման հիմնական և արդյունավետ միջոցների ընտրությունը,

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ուսանողն ունակ կլինի՝

- Վերլուծել ծրագրավորման ժամանակակից տեխնոլոգիաների իրականացման արդյունավետ մեխանիզմները, տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթության ոլորտում,
- նախագծել հանրակրթական դպրոցում ինֆորմատիկայի ուսուցման արդյունավետ դասագործընթաց՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ծրագրավորել և իրականացնել վեբ և բջջային /մոբայլ/ նախագծեր, կազմել տարբեր բարդության ալգորիթմներ, սվյալների հենքեր,
- նախագծել և կիրառել ամպային նորարար,

	<p>ցանցային տեխնոլոգիաներն ինչպես ուսումնական, այնպես էլ այլ մասնագիտական գործընթացներում,</p> <ul style="list-style-type: none"> • առաջադրել կրթության տեղեկատվայնացման արդյունավետ մեխանիզմներ, ձևեր, մեթոդներ և ծրագրային միջոցներ, գնահատել տեղեկատվական անվտանգության կարևորությունը և դրա կազմակերպման արդյունավետությունը գործնականում, • մոդելավորել տարբեր ուսումնական և մասնագիտական գործընթացներ ինչպես էրկչափ, այնպես էլ եռաչափ միջավայրերում: <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ ուսանողն ունակ կլինի՝</p> <ul style="list-style-type: none"> • օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), • բանավոր և գրավոր արդյունավետորեն հաղորդակցվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, աշխատանքներում մայրենի և օտար լեզուներով՝ ներկայացնելով հոգեբանամանկավարժական, մասնագիտական հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, կառուցել նախագծեր, • օգտագործել տարբեր համակարգչային ծրագրային ապահովումները մասնագիտական գործունեության խնդիրներ լուծելիս, • պահպանել մանկավարժական - մասնագիտական էթիկայի նորմերը, վարքականոնները, ֆիզիկական առողջությունն ու գործունակությունը, սլանավորել ժամանակը, փաստաթղթավորել և կազմակերպել ուսուցման գործընթացը:
<p>ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Մասնագիտության գործունեության ոլորտները.</p> <ul style="list-style-type: none"> • Կրթական հաստատություններում (հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ)՝ որպես ինֆորմատիկայի ուսուցիչ,

	<ul style="list-style-type: none">• <i>հանրակրթական դպրոցներում՝ օպերատոր, համակարգչային տեխնիկայի մասնագետ,</i>• <i>ծրագրավորման կենտրոններում և ֆիրմաներում՝ որպես ծրագրավորող, ցանցային ադմինիստրատոր:</i>
--	--